

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2018-2019 ուստարի)
11-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ինչպե՞ս էր կոչվում Հայաստանը Բեհիսթունյան արձանագրության պարսկերեն բաժնում. 0,5 մ.
ա/ Ուրարտու բ/ Արմինա
գ/ Հարմինոյա դ/ Նաիրի
2. Ո՞ր պատմիչն է հիշատակում Տիգրանակերտի պարիսպների բարձրությունը. 0,5 մ.
ա/ Ամֆիկրատես Աթենացի բ/ Մովսես Խորենացի
գ/ Պլուտարքոս դ/ Ապպիանոս
3. Մեծ Հայքի ո՞ր գավառից է սկսվել Մարկոս Անտոնիոսի պարթևական արշավանքը. 0,5 մ.
ա/ Եկեղիք բ/ Կարին
գ/ Տարոն դ/ Դերջան
4. Ո՞վ է հաջորդել Տրդատ Բ-ին. 0,5 մ.
ա/ Որմիզդ-Արտաշիր բ/ Արտավազդ Ե
գ/ Խոսրով Բ դ/ Տրդատ Գ
5. Ո՞վ էր ղեկավարում ռուսական զորքերը Շամքորի ճակատամարտում. 0,5 մ.
ա/ գեներալ Մադաթով բ/ գեներալ Կրասովսկի
գ/ գեներալ Պասկևիչ դ/ գեներալ Լազարև
6. Որքա՞ն էր հայկական զորքերի կորուստը Արճեշի ճակատամարտում. 0,5 մ.
ա/ 1 000 բ/ 1 500
գ/ 3 000 դ/ 5 000
7. Ե՞րբ է մահացել Տարոնի իշխան Աշոտ Բագրատունին. 0,5 մ.
ա/ 948 թ. բ/ 966 թ.
գ/ 978 թ. դ/ 1001 թ.
8. Օսմանյան ո՞ր պետական գործիչն է հետևյալ խոսքերի հեղինակը. «...Եվրոպայում օձ սնուցելով՝ զրկվեցինք Բուլղարիայից. որպեսզի նույնը տեղի չունենա Ասիայում, անհրաժեշտ է բնաջնջել հայությունը»: 0,5 մ.
ա/ Թալեաթ փաշա բ/ Քյամիլ փաշա
գ/ Էնվեր փաշա դ/ Աբդուլ Համիդ Բ
9. Հայոց ո՞ր արքայի մահվան մասին են Տակիտոսի հետևյալ խոսքերը. «Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»: 0,5 մ.

10. Ո՞վ է «Գիրք հարցմանց» բնագիտական ու հասարակագիտական խնդիրների բացատրությանը նվիրված հանրագիտական երկի հեղինակը: 0,5 մ.

11. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
ա/ Խանասորի արշավանքը
բ/ Բաբշենի հաղթական կռիվը
գ/ Ս. Կուկունյանի արշավանքը
դ/ Թանգիմաթի հրապարակումը
ե/ Փոքր Ղարաքիլիսայի ճակատամարտը
զ/ Մ. Ավետիսյանի գլխավորությամբ Վանի ինքնապաշտպանությունը
է/ Երևանի նահանգի տրոհումը 7 գավառների

ը/ Գում Գափուի ցույցը
 թ/ Գյալիսորի ձորի կոիվը
 ժ/ «Հայասեր-ագգասեր» խմբակի ստեղծումը

1	2	3	4	5	6	7	8	9	10

12. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

- | | | |
|------------------------|-------------------------|-------------------------------|
| 1. Վարդան | 2. Հրայր Դժոխք | 3. Գարուն Աղասի |
| 4. Մեծն Մուրատ | 5. Նիկոլ Դուման | 6. Մարտիկ |
| ա. Համբարձում Պոյաճյան | բ. Մարտիրոս Սարուխանյան | գ. Կարապետ Թուր-Սարգսյան |
| դ. Սարգիս Մեհրաբյան | ե. Արմենակ Ղազարյան | զ. Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան |

1	2	3	4	5	6

13. Տրված տարբերակներից ընտրե՛ք 6 ճիշտ պնդումները: 1,5 մ. (6 X 0,25 մ.)

- ա/ Սյունիքի թագավորությունում 12-րդ դ. կար 40 վանք:
- բ/ Բագրատունյաց Հայաստանում կար 112 բերդ:
- գ/ Տարոնի զավթումից հետո Բյուզանդիան գրավել է Մանազկերտը:
- դ/ Աշոտ Բ-ն հարձակվել է Տփղիսի ամիրայության վրա և ջախջախել Յուսուֆ ամիրայի կայազորը:
- ե/ Յուսուֆը Սյունյաց Սմբատ թագավորից պահանջել է, որ նա Նախճավանի Երնջակ բերդի պաշտպաններին գենքը վայր դնելու հրաման տա:
- զ/ Անանիա Մոկացի կաթողիկոսը 948 թ. կաթողիկոսական աթոռն Աղթամար կղզուց տեղափոխեց Կարինից հյուսիս գտնվող Արգինայի վանք:
- է/ Գագիկ Ա-ն իր թագավորությանը միավորել է Արցախի մեծ մասը, այդ թվում՝ Վայոց ձորը և Խաչենը:
- ը/ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին Բագրատունյաց Հայաստանի վերջին սպարապետն էր:
- թ/ Սիսիանը Սյունիքի թագավորության առաջին մայրաքաղաքն էր:
- ժ/ Կարսի թագավորության հիմնադիրը Սմբատ Բ-ի եղբայր Մուշեղ Բագրատունին էր:
- ժա/ Դավիթ Անհողինն ընդարձակել է իր թագավորության սահմաններն ի հաշիվ Գանձակի և Տփղիսի ամիրայությունների:
- ժբ/ 1022 թ. Տայք նահանգի պատկանելության շուրջ բանակցություններ են տեղի ունեցել Բյուզանդիայի և Վրաստանի միջև:

1	2	3	4	5	6

14. Տրված պնդումների համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը:

- ա/ Մենուան առաջին հաղթանակներն է տարել տարածաշրջանի խոշորագույն պետության՝ Ասորեստանի նկատմամբ և Վանի թագավորությունը վերածել գերտերության:
- բ/ Իշպուինիի օրոք սկսվեցին և Մենուայի օրոք շարունակվեցին ռազմական բարեփոխումները. նախկին դաշնային աշխարհագրորդ փոխարինվեց արհեստավարժ կանոնավոր բանակով:
- գ/ Արգիշտի Ա-ն Ք. ա. 785-783 թթ. արշավել է Դիաուխի, իր տերությանը միացրել Սևանա լճի ավազանի իշխանությունները, ամրապնդել դիրքերը Ուրմիո լճից հարավ-արևմուտք:
- դ/ Արգիշտի Ա-ի առաջնորդությամբ ստեղծվել է Վանի աշխարհակալությունը:
- ե/ Սարդուրի Բ-ի օրոք Վանի տերությունն ունեցել է տարածքային ամենամեծ աճը:
- զ/ Վանի վերջին հստակ թվագրվող արքան Սարդուրի Գ-ն է, որն ասորեստանյան արձանագրություններում հիշատակվում է Ք. ա. 643 թ.:

1,5 մ. (յուրաքանչյուր ստույգ պատասխանը՝ 0,25 մ., ոչ ստույգը՝ — 0,25 մ., իսկ բոլոր «Չգիտեմ» պատասխանները՝ 0 մ.)

	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Չգիտեմ						

15. Տրված պնդումների համար ընտրել «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը:
- ա/ Հայկական մարզն ստեղծվել է Նիկոլայ Բ-ի հրամանագրով:
 բ/ Արմենականները Հայկական հարցի լուծումը կապում էին Եվրոպայի օգնության և համաժողովրդական ապստամբության հետ:
 գ/ Կ. Պոլսի հայ համայնքի Ազգային ժողովը և Կովկասի փոխարքայությունը ստեղծվել են նույն տարում:
 դ/ «Ազատության ավետաբեր» թերթը տպագրել է «Հայրենասերների միություն» խմբակը:
 ե/ ՀՅԴ ծրագրի «Միջոցներ» բաժնում ասվում էր, որ ապստամբության ճանապարհով պետք է հասնել Արևմտյան Հայաստանի ազատությանը:
 զ/ Հնչակյաններն իրենց ծրագրում որպես մոտակա նպատակ սահմանել էին մարդու կողմից մարդու շահագործման վերացումը և սոցիալիզմի կառուցումը:

1,5 մ. (յուրաքանչյուր ստույգ պատասխանը՝ 0,25 մ., ոչ ստույգը՝ — 0,25 մ., իսկ բոլոր «Չգիտեմ» պատասխանները՝ 0 մ.)

	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Չգիտեմ						

16. **Շարադրանք. ներկայացրե՛ք 1894 թ. Սասունի և 1895-1896 թթ. Ջեյթունի ապստամբությունները, Մայիսյան բարենորոգումների ծրագիրը:** 3 մ. (ստուգման նվազագույն քայլը՝ 0,25 մ.)

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ինչպե՞ս էր կոչվում ժողովրդական ժողովը Սպարտայում. 0,5 մ.
 ա/ ապելլա
 բ/ ագորա
 գ/ բուլե
 դ/ գերուսիա
2. Ե՞րբ է բացվել Կոստանդնուպոլսի համալսարանը. 0,5 մ.
 ա/ 976 թ.
 բ/ 1025 թ.
 գ/ 1045 թ.
 դ/ 1081 թ.
3. Ե՞րբ է Ռուսաստանը միացել Անտանտին. 0,5 մ.
 ա/ 1899 թ.
 բ/ 1901 թ.
 գ/ 1904 թ.
 դ/ 1907 թ.
4. Ո՞վ է շոգեշարժիչի գյուտի հեղինակը. 0,5 մ.
 ա/ Ռոբերտ Օուեն
 բ/ Էդմունդ Բյորկ
 գ/ Ջոն Լոկ
 դ/ Ջեյմս Ուատ
5. Ինչպե՞ս էին կոչվում առևտրականներին միավորող կազմակերպությունները միջնադարյան Եվրոպայում: 0,5 մ.

6. Թվարկե՛ք 14-րդ դարում Փոքր Ասիայում գոյություն ունեցած 4 պետություններ: 1 մ. (4 X 0,25 մ.)

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմն ավարտվեց Մեծ Բրիտանիայի՝ հոգուտ Ռուսաստանի պատերազմի մեջ մտնելով:

բ/ Պատմաբանների հետազոտությունների համաձայն՝ Առաջին աշխարհամարտում զոհվել են 10 մլն զինվոր և 13 մլն քաղաքացիական բնակչություն:

գ/ 1923 թ. Թուրքիան հռչակվել է հանրապետություն՝ Մուստաֆա Քեմալ փաշայի ղեկավարությամբ:

դ/ Մարշալի պլանի հեղինակը ԱՄՆ նախագահ Ջոն Քենեդին էր:

ե/ Փարիզի խաղաղության վեհաժողովը մեկնարկել է 1919 թ. հունվարի 18-ին:

զ/ 1940 թ. հունիսին գերմանական զորքերն առանց դիմադրության հանդիպելու մուտք գործեցին Ավստրիայի մայրաքաղաք Վիեննա:

1	2	3

Առարկայական
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.04.2019 թ.